

«Լոռու Մարզի Համատիրությունների Կենտրոն» ՀԿ

Հիմնադրվել է 1999թ-ի օգոստոսին

Նպատակները

Նպաստել Լոռու մարզում համատիրությունների ստեղծմանը, կառավարմանն ու զարգացմանը: Ներկայացնել ու պաշտպանել սեփականատերերի ընդհանուր շահերը տեղական ինքնակառավարման, դատական եւ այլ իրավասու մարմիններում:

Աշխատանքներ տանել նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ: Համագործակցել Հայաստանյան եւ արտասահմանյան նմանատիպ փորձառու կազմակերպությունների հետ կազմակերպության աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Իրավական օգնություն ցուցաբերել Լոռու մարզի համատիրություններին: Նպաստել համատիրությունների աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու ունակությունների զարգացմանը դասխոսությունների, սեմինարների եւ այլ հանդիպումների միջոցով

Իրականացրած ծրագրերը

1999թ-ին նպաստել է հինգ համատիրությունների ստեղծմանը:

2000թ-ին երեք համատիրությունների ստեղծում, խորհրդատվության մատուցում:

2001թ-ին յոթ համատիրությունների ստեղծում համագործակցելով ՄԱԿ-ի համաշխրհային ՄԱԳ- ծրագրի հետ:

Իրականացրել է թվով 10 բազմաբնակարան շենքերի եւ բակերի վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներում ընդգրկվել են 40 աշխատող:

2002թ-ին ՄԱԿ-ի ՄԱԳ-ի ծրագրով բազմաբնակարան շենքերի եւ բակերի վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներում ընդգրկվել են 60 աշխատող:

2003թ-ին ՄԱԿ-ի ՄԱԳ-ի ծրագրով 20 բազմաբնակարան շենքեր-80 աշխատող:

Համագործակցելով «Միջազգային Օգնություն Հայաստանին» կազմակերպության հետ, իրականացվել է բարեգործական ծրագիր՝ անապահով 700 ընտանիքի տրամադրելով հագուստ եւ ընդեղեն:

Իրավական օգնություն է ցույց տվել բոլոր համատիրություններին:

800 անապահով ընտանիքների տրամադրվել է հագուստ:

ԼՄՀՄ ՀԿ-ի կազմում ընդգրկված են 28 համատիրություններ շուրջ 65000 շահառուներով:

Իրականացման փուլում է

2004թ-ի դեկտեմբերի 1-ից իրականացնում է «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID)-ի կողմից հատկացված միջոցների հաշվին «Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքներում համատիրությունների ստեղծում եւ աջակցում» ծրագիրը:

Կազմակերպա-իրավական տեսակը Հասարակական կազմակերպություն

Իրավաբանական տեսակը ոչ առեւտրային

Աշխատողներ 6

Տնօրեն Բերո Եղիշի Առաքելյան

Հասցե՝ ՀՀ, 377200, Վանաձոր, Գ-ր. Լուսավորիչի 32

Հեռ. (0322)43531 Ֆաքս (0322)43531 Էլ.հասցե lmhk@rambler.ru